ՏԵՂԵԿԱՆՔ

ԱԺԲԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ-ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)









* ՀՀ պետական բյուջե հաշվեգրված հարկային եկամուտներ և պետական տուրքեր

** Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

*** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

2020 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 1016.8 մլրդ դրամ, որը կազմում է 2020թ. ինն ամսվա համար հաստատված ցուցանիշի 87.6 %-ը: Հատկանշական է, որ 2020 թ. փաստացի ցուցանիշը 2019թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 5.8 %-ով կամ 62.4 մլրդ դրամով, իսկ 2018թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 14.9 %-ով կամ 129.1 մլրդ դրամով:

2020 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 335.1 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 5.9 %-ով, սակայն 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 9.8 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 122.6 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 17.5 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 4.9 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 310.5 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 2.0 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 19.6 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 83.6 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 1.7 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 12.5 %-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 46.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 28.8 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 21.0 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 41.0 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 2.8 %-ով, սակայն 2018 թ. մակարդակից պակաս է 3.0 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են շուրջ 20.0 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 3.6 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում՝ 39.4 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 17.4 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 25.6 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 29.7 %-ով,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են 17.6 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 15.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 21.4 %-ով,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 22.6 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 24.6 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին զիջում է 12.4 %-ով:

Հարկերի անցումային գերվճարները 2020թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել են -307.7 մլն դրամ՝ 2019թ. -850.8 մլն դրամի և 2018թ. -55.2 մլրդ դրամի դիմաց:

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը

2018-2020թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ